


## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության փորձագետ Գոհար Մելիկի Անտոնյանի կողմից 2022թ. մայիսի 19-ից մինչև օգոստոսի 19-ն կատարված աշխատանքների վերաբերյալ

Ես՝ Գոհար Մելիկի Անտոնյանս, 2022թ. մայիսի 19-ից մինչև օգոստոսի 19-ն  
աշխատելով որպես ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման  
գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

- քաղաքացիների ընդունելության, դիմումների ընդունման, ուսումնասիրության, փաստաթղթերի տրամադրման գործընթացի կազմակերպում, դիմողին օգնության ցուցաբերում՝ գրավոր առաջարկելով համալրել փաստաթղթերի ցանկը՝ նշելով քաղաքացիական կացության ակտը գրանցելու կամ դրանից բխող այլ գործառույթ կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը կամ փաստաթղթերը
- ապահովում քաղաքացիական կացության ակտային գրանցումների արխիվի վարումը և պահպանումը
- քաղաքացիական կացության ակտերի գրանցման և դրանից բխող այլ գործառույթների իրականացման համար դիմումների լրացում, կից ներկայացվող փաստաթղթերի ընդունում, դրանց մուտքագրում էլեկտրոնային կառավարման համակարգ և գործակալության կողմից դիմումների քննարկման արդյունքում ձևավորված փաստաթղթի տրամադրում,
- կրկնօրինակ վկայականների և տեղեկանքների տրամադրում,
- քաղաքացիների հնչեցրած հարցերի, նրանց իրավունքների և պարտականությունների, օրենքով սահմանված դրույթների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- Միջազգային փոխօգնության մասին հարցումների կազմում և հասցեագրում ԱՊՀ երկրների իրավասու մարմիններին, ինչպես նաև վերջիններից ստացված հարցումների ուսումնասիրություն, քննարկում, կատարման համար համապատասխան ընթացքի ապահովում:

Հարգանքով՝



Գոհար Անտոնյան  
19.08.2022թ.